

արքունի գանձու, եկեղեցեաց եւ վանորէից. յիշեցո՞յց զզինագարդութիւն կայտառ մանկտոյ ձիաւորաց, եւ ըստ դաւթեան առասացութեան՝ զպաճուճագեղ զգեստաւորութիւն զիսակագեղ դասերաց Սիսուանայ՝ ի հանդերձս կարմիրս եւ յոսկեճամուկս, եւ որ այլն եւս.– հաւատամ, թէպէտ ոչ իցէ հասեալ առ իս՝ իպատմութենէ, զի թէպէտ Սկեւոացին, թէպէտ ծերունի կաթողիկոսն Յովհան, եւ թէպէտ այլ ոք՝ ոչ վերջացան՝ ի պատշաճից աստի: Այլ շատ է՝ իվկայութիւն խորագոյն կրից եւ սիրոյ համօրէն ժողովոյն՝ եւ դոյզն ինչ հասեալ մեզ գրով աւանդեալն. այն, զի մինչդեռ չէ եր թագաւորին արձակեալ զյետին շունչ կենացն, այլ արդէն մտեալ յառագաստ օրհասին, արտաքոյ կացեալ ժողովուրդն, իշխանք եւ քահանայք՝ վիճէին վասն մարմնոյն, այսինքն է տեղոյ հանգստարանին, իւրաքանչիւր յիւր կողմն ձգելով հաւանական փաստիւք. որոց յառաջամատոյց ինքն կաթողիկոսն՝ յիւր վանսն, որ՝ թժամուն հայրապետանոց էր, ՝ իհոչակաւոր մայրավանսն՝ իԴրագարկ՝ ասէր պատշաճ հանգուցանել զնա. անդէին Պարոնայքն՝ հաւատարիմ պաշտօնեայք հրամանաց թագաւորին, եթէ ըստ պատուիրանի նորին պարտ եւ արժան է ամենայնի՝ յընտրեալն իւր՝ իդաստակերտ՝ յԱկներոյ վանս տանել, ուր եւ հիւանդագին անձամբն դէմ եղեալս է, եւ ահա արգելու միայն օրհասն կանխաժաման. բողոք՝ իբերանոյ բնակչացն՝ քաղաքամայրն Սիս, եթէ ուր աթոռ է արքայի եւ արքունաշէն նորա եկեղեցի՝ աստանօր վայել է նմա եւ դնիլ՝ իտապանի: Յաղթողագոյն գտան աշխարհական դասքն, ժողովուրդն եւ իշխանք. գոյժ մահուն՝ խաղաղեաց զխռովեալսն. եւ միաբանեալ՝ հաւանեցան հաճել զերկոսին եւս կողմանսն. կատարել զկտակ թագաւորին եւ զկամս ժողովրդեան. բառնալ զմեծահարկի սիրտն փորոտեօքն հանդերձ, տանել հանգուցանել՝ իհաճոյականն իւր վանս Ակներոյ իսկ զմարմինն՝ ՝ իթագաւորականն իւր յուղարկել քաղաք, եւ յիւր սեփական ձեռակերտ եկեղեցւոջն՝ իկափարումն. եւ արարին այնպէս:

Թագուցին կոփածոյք զհողեղէն նշխարս Լեւոնի. թուէր հոգւոյն հոլոնեալ թեւածել ընդ երկար՝ զտամբն եւ զաշխարհաւ. ոչ ջնջեցաւ պատկեր նորա յաչաց տեսողացն՝ մինչեւ ցօր վախճանի իւրեանց, եւ ոչ յիշատակն՝ իբրեւ կենդանոյ պաշտեցեալ՝ ցկատարած հարստութեան Ռուբինեանց. օրհնութեամբ կրկնելով անուանն՝ յորդուց յորդիս, նաեւ յօտար եւ՝ իմայրենի տոհմի ծնունդս իսկ՝ զԼեւոն անուն յաճախ դնելով մանկանց՝ որ՝ իիռանկ հօրէ: Ոչ որպէս զբագումս՝ իմեծամեծ իսկ մարդ-